

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Զորեքտասահներորդ գարուն սկիզբ՝ երկար ատեն, ու այլ և այլ գժընդակակ ու գժուարին հանդամանաց մէջ կանդուն մնացած Հայաստանի քաղաքական իշխանութեան գնաժամամբ հասած էր։ Չորս կողմէն ՚ի թշնամեաց պաշարեալ, անոնց աչքն ու զէնքը իր վրայէն անբաժան ունեցող Հայաստանը, նեղքին պառակտամանց ու ընտանի անմիտաբանութեանց ալ ենթակայ ըլլալու գժբաղդ վիճակին մէջ կը գտնուի։ Ալ անկէ ետքը որ և իցէ յարձակմունք և պատերազմ՝ անոր վերահաս անկումը կը փութայցընեն։

Այսպիսի քաղաքական վիճակի մէջ գտնուող ազդի մը մատենագրութիւնը՝ տարակոյս չկայ որ ծաղկեալ ու բարգաւաճ կերպարանքի մը տակ ալ չի կրնար մեզ ներկայանալ։ Վասն զի ինչպէս ամեն ազդի ասանկ ալ մեր մատենագրութեան կեանքը, մնունդն ու բարգաւաճանքը՝ քաղաքական վիճակին ընթացիցը հետ համաձայն ու համաքայլ է։

Այսպէս, թողլով ուրիշ զանազան ազդերը, գիտենք որ Ազտաշխախ խաղաղ ու բարգաւաճ թագաւորութեանը ժամանակ՝ կը սկսին ընդարձակիլ և ծաղկիլ գիտութիւնք Վասմաշահոյ օրերն ալ մեր ոսկեղարը կընծայեն։ Կը յաճախեն գլուխք, կը խրախուսին հանճարը, սկզբնագիր և թարգմանուած երկասիրութիւնք՝ գեղեցկութեան, պերճութեան և իր փառաց վերջին ծայրը կը հասցընեն լիզուն։ Բայց երբ յանակնեալս՝ անոր թագաւորական գաւազանը՝ զրեթէ իր ձեռացը մէջ խորտակելով կը փշրի, երբ իրեն օժանդակի ու նեցուկ կայնող հայրագետական մականը՝ անարժուներու ժառանգութիւնը կը մնայ, երբ կը վրդովի խաղաղութիւնը, ու մահահուսուերը կը սկսին շողալ ու արեամբ ներ-

կանիլ, մէկէնիմէկ մատենագրութիւնն ալ իր նախկին փայնն ու պայծառութիւնը կը կորմնցընէ, և հինգերորդ փառաւոր ու բարգաւաճ գար մը, իրեն ամենեին անսման վեցերորդ մը կ'երեցընէ, յորում գրեթէ կը լսեն գրպառութիւնք, և յորում նշանաւոր անպատած քանի մը անձանց գրուածոցն ալ դրոշմը՝ ժամանակին թշուառութեանցը, և քաղաքական իշխանութեան աղքատութեան յայտարար և անտարակուսելի նշանները կ'ըլլան։

Ասանկ ալ Բագրատունի և Ռուբինեան թագաւորաց՝ ամենէն աւելի բարգաւաճ ժամանակները՝ նշանաւոր ու ծաղկած են ՚ի մատենագրութեան։

Բայց երբ Ռուբինեան իշխանութիւնը անհագար յարձակմանց և թշնամութեանց նպատակ ըլլալով, անոնց հետեանք նեղքին ու ընտանի երկպառակութիւնք ալ կը սկսին փութացընել անոր կործանումը, երբ ալ լուած են Շնորհալին ու իրեն արժանաւոր ժառանգը և յաջորդդի ի սրբութեան և ՚ի փիտութեան, և ընդհանրապէս բոլոր աշխարհին վրայ ծանրացած աղէտք և ոչ խակ ժամանակ կը ձգեն ուսմանց պարագելու, այնուհետեւ բոլորովին անկման վիճակի մը մէջ կ'կյայ մատենագրականը։

* *

Արտաքին և անընդհատ պատերազմունք այնչափ զժնդակի, ահաւոր ազդեցութիւն ըրած էին Հայաստանի բնակչաց վրայ, որ շատերը մտադիւրութեամբ կը հեռանային իրենց հայրենի երկրէն, և հոն կորանցուցած ու միւս անգամ ձեռք ձգելէն յուսահատ խաղաղութիւնը, հեռաւոր երկիրներու մէջ կը փնտաէին։ Ասիկայ է որ գաղթականութեան սկզբն երևցուցած է ՚ի Հայաստան։

գաղթականութիւն մը կրնայ օդ-
տակար ըլլալթէ գաղթողին և թէ այն
երկրին յորում կը հաստատուի . բայց
խաղաղութեան , հանգստութեան ժա-
մանակաց մէջ փնտռելու է այդ օդու-
տը : Բնաւորներու սուրերէն և 'ի հրոյ ,
յաղքատութենէ և 'ի պածութեանց
հալածեալ ժողովուրդ մը՝ հաղիւ ժա-
մանակ և պարապ կ'ունենար իր ամե-
նէն աւելի սիրելին ապահովցընել հոն՝
ուր կը տեսնէր գաղքարեալ , լրեալթըշ-
նամենց տուրն ու արհաւերը : Եւ թէ-
պէտ անտարակոյ է հայրենեաց քաղ-
ցրութիւնն , բայց անոր մէջ փնտռուած
ու չգտնուած հանդարտութիւնն երբ
յաջողի գտնել ուրիշ տեղ , նոյն իսկ
հայրենեաց քաղցրութեան յիշատակը
կը մոռցուի :

Այս նորութեանց առջեւ ամեն բանէ
աւելի փոփոխութեան ենթակայ պիտի
ըլլար լեզուն :

Հայերէնը՝ որ տասը գար զրաւորա-
կան հարատութեամբ երբեմն պայծա-
ռացեր ու փառաւորուեր , և երբեմն
ալ անցքութեան կամ նկնութեան մէջ
ինկած էր , նոյն լեզուն խօսող ազգին
հետ կը հեռանար իր կեզրոնէն , ու այլ
և այլ ազգերու և իշխանութեանց հետ
խառնուելով , ալ այնուհետև յարատե
անկման ու տկարանալու վիճակին մէջ
պիտի իյնար 'ի հարիէ :

Աս փոփոխութիւնը՝ արդէն Ռուբի-
նեանց թագաւորութեանը ժամանա-
կէն սկսած էր զգալի ըլլար : Տարակոյս
չկայ որ մեր հին նախնեաց ժամանակն
ալ պէսք էր որ ուրիշ եղած ըլլար գը-
րաւոր լեզուն , և այլ խօսուածը . բայց
խօսակցութեան լեզուն գրաւորականին
հետ խառնելը՝ մեր չորրորդ հարստու-
թեան՝ Ռուբինեանց ժամանակէն սկը-
սած ու գրեթէ սովորական եղած է .
մանաւանդ այն գարերուն մէջ երեցած
մատենազրաց ձեռքով՝ որոնք չէին ու-
նեցած ոչ ժամանակ և ոչ պատեհու-
թիւն իրենց նախնեաց լեզուին հմտա-
նալու , և ուրիշ կողմանէ ալ ստիպուած՝
կամ իրենց ժամանակաց անցքերն 'ի
դիր անցընելու , կամ ազգին մտաւոր և

հոգեկան օդտին համար աշխատելու :
Ռուբին գրաւոր լեզուին աշխարհիկ
լեզուի հետ խառնուելուն զլխաւոր գա-
րադրուխը հարկ է որ սեպենք Ռուբի-
նեանց իշխանութեան վերջին կէսը ,
կամ աւելի ճիշդ խօսելով՝ այն ատե-
նուան ընծայենք հայերէն աշխարհիկ
լեզուին աւելի ընդհանուր դործածու-
թիւնը :

Ի՞նչ կերպարանք՝ կամ զլխաւոր յատ-
կութիւն ունէր այն ատենուան աշխար-
հարաբու :

Լեզու մը՝ որ գրութեանց համար
սահմանուած է , երբ զրբէ գուրս և
ուամիկ ժողովրդեան բերանն իյնալով
լեզու կը ձևանայ , — բայց առանց ու-
նենալու իր հաստատուն կանոններն ու
քերականական ճշդութիւններն , —
սցն լեզուն՝ փոխանակ օր օրուան վրայ
պայծառանալու , միշտ յետախաղաց
վիճակի մը մէջ է : Ասանկ զիրբ մը ու-
նեցած է նաև մեր լեզուն . գրբերէ
գուրս և ժողովրդեան բերանը , — հայ-
րենիք , ազգութիւն և ինքնօրինութիւն
չունեցող ժողովրդեան մը՝ , այն լե-
զուն անկարելի է որ հայրենեաց և ազ-
գութեան իսկատիպ դրոշն ունենայ .
հարկ է որ հայրենեաց մէջ մնայ ազգատ
լեզու մը , իսկ հայրենիքէն դուրս՝ օտար
լեզուի մը հետ խառնուած հարստու-
թիւն մը ունենայ , որ և այն ոչ ինչ
ուուազ է քան զաղքատութիւն :

Բայց ասոր խալ քաղքարական պատ-
ճառներ կան :

Արեւմտեան ազգերը խաչակրութեամբ
կը ծանօթանան Հայաստանի : Այն քա-
ղքարական ծանօթութիւնն կ'ունենայ
նաև Հայոց կրօնական սկզբանց և ին-
չուան լեզուին վրայ ալ ազգեցութիւն
մը : Եւրոպացի թագաւորաց և իշխա-
նաց հետ տեսութիւն ու բարեկամու-
թիւն ընող Հայաստանի թագաւորիներն՝
իրենց արքունեաց , բանակին և աշխար-
հին մէջ կ'առնուն 'ի փոխ անոնց սովո-
րութիւններն , պատուանուններն , պաշ-
տամունքը և ինչուան նաև լեզուն : Այն
ատեներն և իրենց թելազրութեամբը
գրուած այլ և այլ արքունի հրովար-

տակներ՝ կը բովանդակեն զանազան գաղղիական, լատին և ինչուան գերմանական բառեր:

Ասանկով օտար ազդեցութիւն մը կը սկսի տիրանալ ու զօրանալ հայկական լեզուին վրայ: Բարբառոյ աղաւաղութիւն մը կը սկսի, թէպէտ և բարեկարգութեան նպատակաւ ու թագաւորաց ձեռքով և իշխանութեամբ մը տած:

Սակայն հարկ է խոստովանիլ թէ շորեթասաններորդ դարուս մէջ որչափ ալ կը սկսի աշխարհիկ լեզուն ծաւալիլ և ընդհանուր ըլլալ, ու այլ և այլ գաւառաց կամ գաղթականութեանց համեմատ ձև ու կերպարանք առնուլ սակայն գրաբարի ուսումն ալ գեռ բոլորովին անհետացած չէ: Երեքտասաններորդ դարուն չորեքտասաննին անցքը չէր կը ընար մէկնիմէկ այդ կարգէ գուրս փոփոխութիւնն ընել. ուստի և 'ի հարկէ կը մնային գեռ ևս վարժարանք և վարդապետք՝ յորս ժամնանակին ու անձանց տեղեկութեան և հմտութեանը տանելուն չափ՝ նախնի լեզուին ուսումը կ'աւանդուէր. ու կը դտնուէին, թէպէտ և սակաւաւորք, որ անոր պարապին: Կրօնական համոզմանց տարբերութիւն՝ ուսումնականին վրայ ալ ազդեցութիւն կ'ընէր, ու այլ և այլ դասակարգութիւն և վարժարաններ կը կազմէին ջաթեացին և Քաննեցին. և ինչպէս առաջինը ասանկ ալ իրեն նախանձորդը, ունէին իրենց հետևողք, ու զանոնք բազմացընել կը փութային: Ասնապատակին հասնելու համար՝ հարկ էր վարժարաններ բանալ, հոն ժողովել իրենց կուսակիցքն, և իրենց հոգւոյն ու սկզբանցն հետ նաև ուսումն ալ աւանդել: Այսպէս Քաննեցին և իր համախոհքն բաւական չէին սեպեր իրենց 'ի Մարազաբնակութիւնն և հոն ունեցած դպրոցներն, այլ հարկ կը սեպէին տարածուիլ ընդարձակութիւն 'ի Նախինան, 'ի Սուլթանիէ և մինև 'ի Տիգիս և 'ի Խրիմ: Նմանապէս ջաթեանք ալ ոչ միայն Սիւնեաց Ստաթեու վանքին մէջ ուսմանց կը պարապէին, այլ նաև նոյն

գաւառին մէջ գայլեծոր կամ Գլաճոր վանքն ունէին, զոր Վարդան աշխարհագիր և ամոռ և վարժարան սուրբ վարդապետաց մերոց և կը կոչէ, և զոր վատաւորեցին Ներսէս Մոկացի և Եսայի Նշեցի, և այս վերջնոյս աշակերտաց թիւը 363ի հասած կ'աւանդեն: Նոյնպէս ալ Որոտնեցին կը վարդապետէր յԱպրակունիս Սիւնեաց, Բարսեղ վարդապետ 'ի Մաշկեւորի վանս, և այլն:

* *

Զորեքտասաններորդ դարուն առաջին կէսը՝ աւելի մտադրութեան արժանաւոր է հայերէն լեզուի յստակութեան նկատմամբ: Այն ժամանակին կը ծաղկէր Նշեցի: Իր ժամանակակիցաց յուղմանցը և տարածայնութեանց անձանօթ կամ անմասն, մէկ կողմանէ իր աշակերտացը կը թուած կ'աւանդեան, և միւս կողմանէ ալ գրաւորական զբաղմնոց կը պարապէր: Կ կարծես թէ գուշակելով այն անկումը՝ ուր գահավէժ պիտի դիմէր լեզուն քիչ ատենէն, անոր գարմանը կը մտածէր, կամ գէթ հեռացընել կը ջնար այն վտանգը, Յովհաննու կրոնկացւոյն նման քերականութեան և անոր մեկնութեանցը զբաղելով կամ զբաղեցընելով: Ինչպէս Եսայեայ սրտին ասանկ ալ ուսմանց և հոգւոյն հետևող կ'երկնան Յովհաննէս Գանձակեցի, Միհիթար Այրիվանեցի և ուրիշ մէկքանիներ: Ասոնք առանց զարմանալի հանճար մը ունենալու, որ յատուկ է մեծ մատենագրաց, բաւական կը սեպէին աւանդապահ ըլլալ այն լեզուին գեղեցկութեանը, որուն ինչպէս քիչ մը առաջ յիշեցինք, անտարակոյս կը նկատէին անկումը, եթէ իրենց նման հայրենասէր լեզուասիրաց ջանքն ու փոյթը անոր նեցուկ ու պահապան չըլլար:

Այն ատեններն կ'երկնար Բարթովիմէսու Բաննիացի:

Յովհաննէս իբ Հռովմայ սրբապան հայրապետին հրամանաւն ու յանձնա-

բարութեամբ՝ առսքելական պաշտամամբ՝ կը հասնէր 'ի Պարսից աշխարհն և 'ի Հայոց (1316) : Ինքն Լատին ազգութ՝ անծանօթ էր Հայերենի . բայց այն աշխարհին օգտակար ըլլալու համար, — վասն զի այս նպատակաւ կը խարուէր, — հարկ էր աննոնց լեզուն ալ սորվէլ: Մարաղայ կորմերը վանք մը շներով, իր ուսմամբն ու բարի վարուք ամենուն սէրն ու մեծարանքը կը գրաւէր. մինչև ինքն վարդապետն եսայի լսելով ու զարմանալով անոր համբաւայն վրայ, կը յզէր առ նա իւր աշակերտը զբովհան Քանեցի, որպէս զի ստոյդ տեղեկութիւն մը բերէ իրեն: Քոննեցի կ'երթար, ու զրեթէ համբաւէն աւելի զինքը մեծարանաց և յարգանաց արժանաւոր տեսնելով, կը խոնարհէր անոր քով յաշակերտութիւն. և մինչ ինքն 'ի Բարձողիմեայ լատին լեզուն կը սորվէր, անոր ալ հայկականին ուսումը կ'աւանդէր :

Բայց ինչպէս Քոննեցի անկատար սորվեցաւ զատին լեզու, ասանկ ալ իր վարդապետը հայկականն : Սակայն անհրաժեշտ հարկ մը տեսնելով իր առաքելութեան գործոյն փութալ, ջանաց այն անկատար լեզուի ուսմամբը գործել ու գրել:

Որպիսի էին արդեաք իր ջանից ելքը: • Որչափ ալ պատմութիւնն իր յաջորդաց ու աշակերտաց նկատմամբ տըլիուր և անաշառ լեզու մը կը գործածէ, նոյնչափ ալ կը գրուատէ Բարձուղմեայ ինալզասէր հոդին և աստուածութիրութիւնն . բայց ասիկայ չարդելուր զմեզ համարձակ զրուցելէն որ, թերեւս առանց ուզելու, լեզուներնուս անկամանն առաջին հարուածը տուողն ինքն եղածէ: Հարկ էր որ անանկ ալ ըլլար. երբ սկսաւ այն անկատար գիտութեամբն լեզուի գրել ու թարգմանել: Սակայն տեսնելով իր անբաւականութիւնն, օգնական կ'առնուր իրեն զբակոր ջահեցի, ու կը սկսէին 'ի պարսից լեզուէ փոխել 'ի հայ այն քարոզներն զոր Բոննիացին քարոզած էր 'ի Պարս, և հարկաւոր կը համարէր զանոնք Հայոց

ալ ծանօթացընել: Ինքն իսկ անկեղծաբար կը խոստովանի թէ « օտար լեզուաւ զօր ոչ գիտէի » թարգմանեցի ». Նմանապէս իրեն օգնականն ալ թէ « Տէր թարթողիմէոսն ուսեալ էր զպարմիկ լեզուն. նաև ես սակաւ մի ծանօթէ էի այն լիզուին, որով զգիրս զայս բարզում շանիւ փոխեցաք 'ի Հայս » : Այս թէ պարսից և թէ հայ լեզուի անհմտութիւննին յայտնապէս կը տեսնուի այն Քարոզգրոց մէջ, որ յանուն Բարձուղիմեայ մինչև մեր ձեռք հասած է, և յորոց ումանք, ընտրանաւ, տպագրուած ալ են 'ի Վենեսուիկ (1704): Քերականական սահմանաց տղիտութիւն, լիզուի նուաստութիւն և աշխարհիկ բարբառոյ հետ խառնուրդ հաւասարապէս կը նկատուի այս քարոզներուն մէջ. և որը թերեւս դիտմամբ այնպիսի ոճ մը ունենան ժողովրդեան հասկընալի ըլլալու համար. բայց լեզուի աղաւաղովթեանը մեծապէս պատճառ ըլլալին անտարակուսելի է, Բարթողիմեայ օտարազգի ընկերակիցներէն ումանք ալ ետևէ եղան հայերէն լեզուն սորվելու և թարգմանութեանց պարապելու . ինչպէս Յովհաննէս (Քոննեցի) և Յակոբ (թարգման) հայ վարդապետներն . « այնչափ այխատեցան 'ի սոյն, կ'ըսէ իրենց վրայ զարմացոյներէն մէկն, մինչ զի անհամար եղեն զիրք զորս թարգմանեցին 'ի մէջ երից ամաց, յորում եկաց կենդանի երաներին Բարթողիմէոս յետ արքեալ միաբանութեանն »: Եւ գարձեալ. « ի սոյնպիսի թարգմանութիւնս զրոց կարի յոյժ աշխատեցաւ ոնն Փատրի Փոնցիս անուն, 'ի կարգէ սրբոյն Ֆրանցիսկոսի, որ էր 'ի սահմանս Պարթևաց »: Բարթողիմէոսի մահուընէն ետքը առաջ կ'անցնի Քոննեցին, և փափաքելով անոր սկսածը շարունակել և առաջ տանիլ, այնպիսի կերպ և եղանակ մը կը բռնէ՝ որ հերձուածի պատճառ կ'ըլլայ յազգին. և այն քարժանումը՝ 'կ'ունենայնաւ իրեն ցաւալի հետեանքն լեզուի նկատմամբ, ինչպէս պիտի տեսնենք : Բանոնիացւոյն հետ կենցաղալզարած

ժամանակ՝ բաւական գաղափար առնելով արևմտից վրայ, ալ աւելի մօտէն կ'ուզէ ճանչնալ զայն։ Աւատի անցնելով յեւրոպա և 'ի Հռովմ, և տեսնելով այն կրօնական բարեկարգութիւններն՝ որ մանաւանդ յայնպիսում ժամանակի կը պակասէին 'ի մեղ, կ'ուզէ Հայաստանի ծանօթ աշցնել զարմանուս. և թէպէտ գովելի էր այն զիստաւորութիւնն, բայց գործադրութեան կերպին մէջ օտարախորհուրդ նաև 'ի նոյն իսկ բանիքուն արևմտեայց, ուզեց արևելցոյ եկեղեցական սովորութիւններն ու լեզոն անհետացընել արևմտականին մէջ. Որչափ ալ իր նախանձաւութեանը հաճոյական էր այս ճամբան, առաջան ունեցաւ իրեն բազմաթիւ հակառակորդքը. և այն հակառակութեանց արդիւնքն եղաւ՝ որ Հայաստան և արևմտութիւնի իրարութայ ծուռ տեղեկութիւններ առնցով ու տալով, ալ աւելի իրարմէ հետացան։

Քոնեցին դարձաւ 'ի Հայաստան, ինչպէս ինքն կ'ըսէ, բարոզող կրօնաւորաց (Դոմինիկեանց) զգեստն ու ձևը հետը բերելով. ու Միաբանողաց կարգին նախկին առաջնորդ և վերակացու կարգուելով, սկսաւ այն բարեկարգութիւններն զորոնք տեսներ և պակասութիւններն զգացեր էր, իր հայրենեաց մէջ ալ մոցընելու աշխատիլ։

Օտարապահութեանը բնական հետեւանք պիտի ըլլար՝ 'ի հայրենականաց կամաց կամաց ուժանալը. Ասոր մէկ գիլսաւոր օրինակը տուաւ ներսէս Պալինց կամ Պալոնց, որ թէպէտ եպիսկոպոս էր Որմեայ, բայց 'ի Հայոց ընդունած ձեռնադրութեան գաւերականութեանը վրայ ալ տարակուսելով, 'ի Միաբանողաց նորէն մկրտութիւն և քահանայական ձեռնադրութիւն ընդուներ էր, և եպիսկոպոսութիւնը արհամարհելով՝ պարծանօք ինքընքը կը կոչէր կանենիկոս քահանայ լարինացի. Բայց ուզելով կամ Կարծելով օդտակար ըլլալ այն ազգին՝ ուստի այն շափ կը գարշէր, չուովմայ հայրապե-

տաց պատմութիւն մը, Ֆրա Մարթինի Լէհացւոյ գործ, թարգմանեց 'ի հայ. յորում շատ տեղ հայերէնին հետ կը խառնէ նաև լատին բառեր։

Երբ Միաբանողը այսպիսի ջանքով և եռանդեամբ ետեէ կ'ըլլան արեմտեան լեզուն, բարձն ու սովորութիւններն մոցընել 'ի Հայաստան, նոյնպիսի փոյթ ու եռանդ կը գործածեն նաև իրենց հակառակորդքն, ջանալով յուսմունա անոնցմէ վար չմալ, ու անանկով ազգին մէջ հաւասար մեծարանք գտնելով անսնց ազգեցութիւններ տկարացընէլ և կամ բոլորովին փճացընել։ Անոր համար թէպէտ իրենց ընթացքը կ'արհամարհէին, բայց անսնց գիտութիւնը չէին մերժեր. և Առաքինութեան ու Մոլորքեանց գրքերը, որ նոյն ժամանակին ամենէն աւելի նշանաւոր երկասիրութիւնքը կը սեպուէին, ու Միաբանողաց ձեռքով թարգմանուած էին 'ի հայ, երկու կուսակցութեանց ալ հաւասար սիրելի էին. և բաւական չսեպելով անսնց վրայէն դասասել կամ լսելը, շատերն նաև բնինուց կը սերուէին։ Գրիգոր Տաթևացի՝ որ Միաբանողաց հակառակուներուն ախոյեանն էր, մասնաւոր և ընդարձակ վարժարան մը բացեր էր 'ի Տաթևու վանս, ուր բազմաթիւ աշակերտներ ժողված՝ կը ջանար իր գիտութեանն հետ նաև կարծիքն ու ոգին տպաւորել անսնց սրտին մէջ. և ինքն Տաթևացի այնչափ կը յարգէր Առաքինութեանց և Մոլորքեանց գրքերն որ շատ անգամ անսնց խօսքերը բառ առ բառ կը կրնէ իր գրուածոցը մէջ։

Ո՞րափ էր Տաթևացւոյն հանճարն և ուսումնական արդիւնքը. Մեզի կ'երենայ թէ չորեկտասաներորդ զարուն համար՝ բաւական հմտութեան ու գիտութեան արժանաւոր անձ մը պէտք է սեպուի, մէկդի առնլով միշտ այն հակառակասիրութեան ոգին՝ որոնք իրեն օրերէն առաջ ու ետքն ալ երբեք ազգին բարւոյ մը առիթ եղած չեն, Հարցմանց, Քարոզից գրքերն, այլ և այլ մատենագրաց խօսքերն ու գրուածոց

մեկնութիւններն կամ լուծմունքը՝ բաւ-
ւական հմտութիւն և աշխոյժ գործու-
նէութիւն մը կ'երկցընեն :

իսկ լեզուի գալով՝ ինչպէս Տաթեա-
ցոյն, ասանկ ալ բոլոր իր գարցցին
գործածածք՝ ընդհանրապէս աւելի մա-
քուր է և Հարազատ՝ Նկատմամբ այն
լեզուին դոր իրեն հակառակորդը կը
գործածէին : Իրեն լեզուին և ոճյն հե-
տևող եղան նաև ուրիշ քանի մը ան-
ձինք որ չորեքտասաններորդ գարուն մէջ
երկցան, և երկու կուսակցութեանց ալ
չէտելով ուսմանց պարապեցան. ա-
սանկ Գէորգ երզնկացի, Կողուտիկ Յովի-
հաննէս, Մատթէոս ու Տիրատուր վար-
դապետներ :

* * *

Այս սակաւաւոր անձինք կը կնքեն
հայերէն դպրութեանց չորեքտասաննե-
րորդ գարը : Անոր ազդեցութեան, զի-
տութեան և հմտութեանց տակ բա-
ցուած կը տեսնենք հնդետասաններոր-
դը . և հարկ չէ ըսել թէ լաւագոյն դրբի
մը մէջ չենք կրնար տեսնել : Նախըն-
թաց գարուն մէջ յիշատակուած դպրո-
ցաց ու վանորէից վրայ կ'աւելնան ջա-
դավանք, համանուն աւանին մօտ յԱյր-
արատ, Յիպնոյ անապատն 'ի Բանու-
նիս, Մեծոփայ վանք՝ յԱրճէշ Էմիա-
ծին և, այլն :

Բանաստեղծութիւնն, կամ աւելի
յատկապէս խօսելով, տաղաչափու-
թիւնն որ գրեթէ լրած զաղրած էր
Շնորհալոյ օրերէն, ու քանի մը համա-
ռուած ու եկեղեցական կամ առտնին տօ-
նից կամ զիպուածոց մէջ կը գործա-
ծուէր, նորէն կ'երկնայ հնդետասա-
ներորդին մէջ, Այս տաղաչափից նախ-
ընթաց է Առաքել Սիւնեցի, որ նոյն
գաւառին եպիսկոպոսական աթոռն ալ
գրաւած է, և ուրիշ քանի մը անշան
գրուածներէ զատ, Երկայն տաղաչա-
փութիւն մըն ալ յօրինած է Ազամայ
նախահօր վրայ, ընդհանրապէս Ադամ-
գիրք կոչուած, ինչպէս նաև լուսաւոր-
չի և ուրիշ զանազան նիւթերու վրայ

ոտանաւորներ, որոնք՝ ինչպէս ըսինք,
աւելի անարուեստ տաղաչափութեանց
մէջ կրնան դասակարգիլ, քան թէ բա-
նաստեղծ ական կամ քերթողական զը-
րուածներ սեպուիլ : Աւելի յաջողած է
յայսմ իրեն ժամանակակիցն Խաչա-
տուր կեշառուեցի, որոյ ծանօթ են ար-
ձակ և ոտանաւոր բանահիւտութիւնք՝
մանաւանդ՝ ի վերայ Աղեքսանդրի Մա-
կեդոնացւոյ, և որք չեն բոլորովին ան-
մասն 'ի հանճարոյ և 'ի քերթողական
աշխութից . բայց ոչ նոյնպիսի չափով
և Առաքելի բաղիշեցւոյ կամ Պոռեցւոյ
և Նաղաշի անուամբ գտնուածներն :

իսկ արձակ լեզուն և ոչ իսկ իր առ-
ջի աղիտալի վիճակին մէջ կը մնայ . այլ
աւելի նկուն և խեղճ կերպարանք մը
կը սկսի առնուլ : Հաղիս քանի մը ան-
ձինք կը գտնուին դրականութեան պա-
րապողը, որք քանի մը համառօտ զը-
րուածներ կը ծգեն : Ասոնց մէջ ամենէն
նշանաւոր կրնայ սեպուիլ Թովմա Մե-
ծոփեցին . իսկ այլք իրմէ շատ աւելի
ստորին գիտութեամբ անձնոր թէ ի-
րենց գիտութեամբն և թէ հայկական
լեզուի ուսմամբ . ասանկ Միխիթար Ա-
պարանեցի, Կիրակոս Երզնկացի, Ամիր-
տովլաթ Ամասիացի, — եթէ այս ետ-
քինին վրայ չըուզենանք զատել բժշկա-
կան հմտութիւնն 'ի բանասիրականէ :

* * *

կը հասնի վեշտասաներորդ գարը . և
այն գարը՝ բոլորովին անկման զար է,
ոչ միայն մեզի՝ այլ նաև ամենայն ա-
րևելից : Զօրաւոր իշխանութիւնն մը՝ որ
այնափ տարիներէ 'ի վեր կը սպառ-
նար Բիւզանդիոնի արքունական գահու-
յից վրայ իր իշխանական աթոռը բարձ-
րացընել, վերջապէս կը հասնի իր նպա-
տակին : Բիւզանդիոն արևելից կայսե-
րութիւնն 'որ իր տկարութեամբն ալ
նեցուկ մը մնացեր էր ոչ միայն քրիս-
տոնէութեան, այլ նաև ուսմանց և
գարութեանց՝ բոլորովին կը Կործանի
կ'իյնայ . և իր վրայ տիրացող գաւագա-
նին և սրոյն ահն ու երկիւղը՝ մինչև

Հեռաւոր աշխարհներ կը տարածի : Այսպիսի յուղեալու տագնապալից ժամանակի մը մէջ հազիւ կը դժուուի ու սումնականութիւն մը փնտող յաղդին , հազիւ քանի մը անձինք անոր պարապողք : Միայն բարսեղ անուամբ վարդապետ մը կը յիշատակուի որ Ամրատուու կոչուած վանքը ետևէ կ'ըլլայ նորոգելու , և անոր մէջ ընակող միաբաններն թէ ներանձնական կենաց և թէ ուսմանց կը պարապեցնէ :

Սակայն անցեալ Հնդեատասաններորդ դարուն մէջ զօրաւոր հնարք և գէնք մը գտնուեր էր տղիտութեան զէմ , և կը խոստանար կերպարանափոխ ընել զերոպա . և էր տպագրութիւնն : Այս արուեստն վեշտասաններորդիս մէջ կ'երենայ յազգիս . Սբդար թոխաթեցին իր Սուլթանահ որդուով և ուրիշ ընկերակիցներով հետաւոր աշխարհներ կը պանդիսի յարեմուտս . և վերջապէս շատ ջանքէ ու աշխատութենէ ետքը կը յաջողի առաջին կարգաւորեալ տպագրութիւն մը երեցընել հայերէն լեզուի 'ի վենեստիկ : ինքը թէպէտ չի կրնար այլ և այլ տպագրութիւններ հրատարակել , որուն համար հարկաւոր եղած միջոցներն ու պաշտպանութիւնը կը պակսէն իրեն , բայց իր ջանիցն հետեւոք պակաս չեն ըլլար՝ որ ուրիշ այլ և այլ երկիրներ ու քաղաքներ կը ծաւալին իրեն օգտակար գիւտը :

Խնդիր մը շատ անգամ յուղուած է , թէ արգեգք ապագրութեան օգուտներն աւելի են եթէ վնասներն : Այս հարցմունքն ընողք՝ որշափ ալ եւրոպական այնպիսի հրատարակութեանց համար կը զրուցեն , որոնց նմաններն մեր տպագրութեանց առաջին ժամանակաց մէջ երեցած չեն , բայց ուրիշ տեսութեամբ կրնանք մենք ալ նոյն տարակոյսն կամ հարցումն ընել . և առանց ուղելու Սբդարու և իրեն հետառողաց արդինքն տարակուաի տակ ձգել , կը նանք համարձակ զրուցել թէ վեշտասաններորդ և եօթնեւտասաններորդ գարուց հայերէն տպագրութիւնք՝ որշափ ալ իրենց բաղմապատիկ անուրանալի

օգուտներն ունեցան , բայց միանգամայն ոչ սակաւ սատարեցին լեզուին անկմանն և վնասուն :

Բացատրենք մեր կարծիքը :

Գրոց ծաւալման գիւրութիւնը տպագրութեամբ՝ անկարելի էր որ ընդհանրապէս անհաճոյ ըլլար գրասիրաց , որոնք ժամանակ կամ զիւրութիւնն չունէին հին ձեռագիրներ ձեռք ձգել , կամ անոնք գաղափարելու համար ժամանակ ու դրամ վատնել . Եւրոպական լեզուք բաւական սկսեր էին ծանօթանալ , և հասկցընել թէ որշափ և բազմաթիւ են այն արտազրութիւնքն՝ որոնց կարօտ կրնար ըլլալ ազգը : Այս պատճառներն ինչպէս ուրիշ ազգաց մէջ , այսպէս ալ 'ի մեղ կրցան այլ և այլ շահադիտութեանց ծառայել , և այնպիսի հրատարակութեանց պատճառ ըլլալ՝ որոնք եթէ ունենան ալ իրենց բարոյական օդուտը , սակայն մեծապէս վնասակար եղան լեզուին՝ անոր խանդարմանը ծառայելով : Այսպէս կիսկատար կամ բոլորովին անհմուտք լեզուին , ուղեցին շարագիր կամ թարգմանիչ ըլլալ . լատին լեզուին և ուսմանց պարագուղք՝ ջանացին նոյն լեզուին վրայ ձուլել հայկականը , և օրինակներ ծաւալեցին տպագրութեամբ . Զահկեցիք բոլորովին օտարացած յաղցային արարողութեանց և 'ի ծիսից՝ սկըսան լատին ծիսական գրքեր թարգմանել և հրատարակել , և այլն :

Հարկ չէ ըսելլ թէ ինչպիսի վախճան կամ յառաջադիմնեթիւն կրնար ունենալ անտէր ու կէս մոռցուած լեզու մը՝ այնպիսի հրատարակուղաց ու բանաբարուղաց ձեռքին մէջ : Ինչ որ անողոք բռնաւորք ըրին մեր հայրեննեաց իրենց սրովն , նոյնն ասոնք իրենց գըրչովն : Մըշափ և քանի տինուր է այն տեսարանը զոր կ'ընծային հայրեննական գալութիւնք , երբ անոր Նշխարեալ փառաց կայծն անգամ այնպիսի խեղճ և յուսահատ վիճակի մը մէջ կը գըտնուի :

* *

Եօթնետասներորդ գարը՝ տպագրութեան գիւտին ազգեցութեամբ, աւելի ուսումնասէր աշխուժի և կերպարանաց տակ մեղի կը ներկայանայ. կարծես թէ աւելի կերպով մը զգալի կ'ըլլան տգիտութեան ձեռքով եղած բազմապատիկ վասաներն, ուստի և զանոնք դարմանելու փոյշի մը կը տեսնուի: Այսպէս Սրապիոն Ռւոհայեցի ըլլովիչաննու վանս՝ յերևան, կարգաւորելու ետևէ կ'ըլլայ, Փիլիպպոս կաթուղիկոս կը նորոգէ վլխմիածին, և անոր մէջ ուսումնարան մը հաստատելով կը ջանայ որ ուսմանց վարդապետք և տեսուչը պակաս ըլլան. և այն պատճառաւ Սիմէոնի Խուղայեցւոյ ու Պօղոսի Փիրօմալի կը յանձնէ նոյն ուսումնարանին մէջ դաս ըսել տրամարանութեան և փիլիսոփայութեան: Առաքել պատմիչ որ նոյն ժամանակաց ստուգախօս վիպագիրն կը համարուի, մեծապէս կը գրուատէ թէ զՄրապիոն Ռւոհայեցի և իրեն բաղմաթիւ աշակերտներն, և թէ զկաթողիկոսն Փիլիպպոս: Պարսկահայոց մէջ նշանաւոր կը սեպուէին նոյն ժամանակաց մէջ ուսումնարանին 'ի Հոռորդ և յԱղովիս:

Միաբանողաց ուխտն բաւական ծանօթացուցեր էր արևմտեայց զջայաստան. բայց շատ անդամ այնպիսի գոյներու տակ՝ որ Հոռովմ հարկ սեպեր էր իր մասնաւոր մոտագրութիւնն զարձնել այն աշխարհին վրայ՝ որուն նըկատմամբ այլ և այլ համբաւներ և երբեմն զրպարտութիւններ ալ կը հասնէին մինչև իրեն: Այն ատեններն Պօղոս Բնոնինիացի իտալացին 'ի կարծէ Քարոզողաց, Նախիջևանի եպիսկոպոսը, բաւական չսեպելով իրեն խնամոց յանձնուած ժողովրդեան օգտին համար 'ի Հայսատան իրեն ջանքով ու ծախիք հաստատած զպրատունները, պանդխստութեամբ գնացեր էր մինչև յարեւմտեան Հնդիկս, և 'ի գարձին մեռեր էր 'ի Սպանիա. և կտակաւ յանձ-

նած որ իր արդեամբը գումարուած ստակը գործածուի Հայոց ազգին համար մասնաւոր դպրատուն մը հաստատելու 'ի Հոռովմ:

Այլ և այլ պատճառներով՝ իր փափաքն և կամքը անգործ մնացին. և փոխարէն սահմաննեցաւ որ 'ի Հոռովմ նոր հաստատուած Արքանեան վարժարանին մէջ որոշեալ թուով հայազգի պատանիք ալ առնուին, որոնց խնամքն ու Խանքն ըլլայ ազդին հոգեւոր և ուսումնական բարույն համար աշխատի:

Ուրբաննեան վարժարանին բազմական տպարանը՝ ինչպէս ուրիշ արենելեան ազգաց, ասանկ ալ մեր ազգին համար մասնաւոր տառեր ստացեր էր, և ետևէ կ'ըլլար իր նպատակին յարմար գրուածներ ազգին մէջ ծաւալել: Բնականաբար իր աշակերսքն պիտի առնուր իրեն ձեռնատւ, ինչպէս նաև ուրիշ քանի մը անձինք որ բնակութեամբ հաստատուած էին 'ի Հոռովմ, և մասնաւոր եկեղեցի և հիւրանոյ ստացած:

Հայոց արեւմտեայց հետ ունեցած ծանօթացներ հետեւանց պիտի ըլլար, որ ինչպէս իրենիք սկսան ետևէ ըլլալ ու պարապիլ, յուսումն լատին և ուրիշ քանի մը արևմտեան լեզուաց, ասանկ ալ երոպացիք՝ որ իրենց հետ ծանօթութեան կամ վերաբերութեան մէջ էին, ուզեցին սորպիլ Հայերէն լեզուն: Արդէն գաղքականութեց պատճառաւ՝ Հայք բաւական ծանօթացեր էին արևմտեայց. և Հայկական տպագրութենէն քանի մը տարի առաջ թէսէոս Ամբրոսիոս Բաւիացին՝ մասնաւոր գրքուկով մը առաջին եղեր էր արևմտեայց Հայ լեզուին և տառից վրայ տեղեկութիւն տուող: Յարաբերութեանց շատնալովը բնական պիտի ըլլար որ գտնուին այն պիտիք ալ՝ որ Հայ լեզուին ուսմանը գործարութենէն շխրշելով, անոր ետևէն ըլլան. և այնպիսնեաց մէջ նշանաւոր եղան յեօթնեկտասներորդ գարուս, բաց ՚ի Բնոնինիացւոյն աշակերտներէն և միաբաններէն, որոնք 'ի Հայոց իրենց առաքելութեան զործովը զրադած էին, նաև Պօղոս Փիրօմալի, Ֆրանչիսկոս

Ոլիվուա, կղեմէս Գալանոս, և ոյլք ու մանք սակաւաւորը :

Ալշափ էր արդեօք ասոնց հայկական լեզուի ուսման գիտութիւնը : Իրենց խնկրով շարադրուած կամ թարգմանուած երկասիրութիւնք՝ այնչափ աղէկ դպրափար մը չեն ընծայեր մեզ այս նիւթիս նկատմամբ . և եթէ ընդհանրապէս աւելի ազգայինք էին որ ամեն փոյթերնին կը գործածէին հայ լեզուին անկմանը, սակայն այսպիսիք ալ ոչ նուազ օգնական եղան կամ իրենց աղդեցութեամբն և կամ նուազ զիտութեամբ : Ալշափ միայն ըստնք որ եթէ Գալանոս, աստու մէջ ամենէն աւելի հայագէսն, հաւասարիմուղենար մնալ իրեն ճանցած և ընդունած սկզբանցը, իր եռահատոր Միաբանութիւն Հայոց կոչուած պատմական ու վիճաբանական զիրքը աւելի յարգ կ'ունենար արեմեաց, մանաւանդ Հայոց, որոց օգտին համար շարադրած է :

Եօթնետասներորդ գարուս մէջ հայկական տպարանաց թիւը կը շատնայ : Անցեալ գարուն մէջ քաց 'ի վենեստիկ և 'ի Հոռվիմ հաստատուածներէն, նոր տպարաններ ալ կը բացուին 'ի Լեմպէրկ Լեհաց (1616), 'ի Միլան իտալից (1624), 'ի Փարիզ (1633), 'ի Ֆուլա (1646), 'ի Լիվոնիա (1640), յԱմստերդամամ (1660), 'ի Մարսիլիա (1673), 'ի Կոստանդնուպոլիս (1677), 'ի Լիբանա (1630), 'ի Փատուիոն (1690) :

Ալյշափ տպարաններ 'ի հարկէ պիտի աշխատէին նորանոր և զանազան գրուածներ հրատարակել : Հայերէն տպադրութեանց ցուցակը հաւատարմութիւն է մեր խօսքին . սակայն արժան է որ համառօտիւ քննենք անոնց արժէքը :

Հոռվիմ իրեն դիտած նպատակին համնելու յարմար գրուածներ ետևէ կ'ըլլայ հրատարակել : Ալյա վախճանաւ 'ի 1623 Եւգինէոս Դքահանայապետին առ Հայս տուած կոնդակը յետ փլորենտեան ժողովցն՝ կը հրատարակէ . Հարատոյ դաշտանուրիւն մը 'ի 1642, Գալանոսի ուսումնական, եկեղեցական

և պատմական գրուածներն . Այսքենարան մը 'ի 1623, Գալանոսի Քերականուրիւնն ու Ծրամարքանուրիւնն 'ի 1645, և որիշ ասոնց նման' բայց նըւազ նշանակութեան արժանի մանք գրուածներ :

Սակայն այն օգտէն զոր կը զիտէր կերպով մը կը հեռանան ոմանք, որ հետևելով ոչ ուղիղ գրութեան մը, կը կարծեն իրաւունք ունենալ հին լեզուի մը կերպարանափոխութեան, և հեղինակ սեպուիլ անոր նորոգ ձևակերպութեանը : Այսպէս ասոնցմէ մեկը, Յովհաննէս Յ. Հոլով, Քերականութիւն մը կը շարադրէ, և տպագրելով 'ի Հոռվիմ 'ի 1674, կը կոչէ զայն Զուուրիւն հայկարքանուրիւնն է . և այն զուուրիւնը, վասն զի ասանկ կը կոչէ լատին րուիտա բառը, ուրիշ բան չէ բայց եթէ անկերպարան քառուի մը մէջ ձգել հայերէն լեզուն : Այսպիսի անկանոնութեան մը՝ կանոն ուզած է աւանդել փիրօմալի, և յարատն յանիք ետևէ եղած է վարդան Յունանեան անոր սահմանած, որոշած և ուզած կանոնաց համեմատ գրուածներ շարադրել : Այսպէս են Զեմքաճուրիւն (1671), Նորագոյն Տայիկ զօրուրիւն (1675), Համանետուման զիրքը (1674), Մանաւանեղականք առարկուրիւնը (1681) :

Խակ յԱմստերդամ, մանաւանդ յառաջ քան զժամանել Բականայ, կ'երենայ որ եթէ ոչ այնչափ հակառակ՝ սակայն և ոչ ալ բոլորովին համաձայն ոդի մը կը տիրէ հայ տպագրապատաց քով : Ուստի երբ մէկ կողմանէ իտալից այլ և այլ քաղաքներն հրատարակուած գրոց մէջ կը մոռցուին կամ կ'արհամարհուին հայերէն լեզուն և մատենագիրք, կամ երբ ասոնք մոռցուելու վտանգի մէջ կը ձգուին, Ծարեցին և իր հետևողքը կը յանան այս մոռացութեան դարման մը ընել, նախնեաց լեզուին կենդանութիւն տալրով անոնց գրուածոց հրատարակութեամբը : Այսպէս երբ մէկ կողմանէ Միաբանողը ետևէ կ'ըլլան Հայոց եկեղե-

ցական գրուածները սրբագիրել, և այն նոր կերպարանաց տակ զամոնիք ծանօթացընել, յԱմսդերուամ նոյն եկեղեցական գրքերը, իրենց սկզբնական վիճակին մէջ կը սկսին հրատարակուիլ տպագրութեամբ. Ժամագիրք 'ի 1664, յաջորդ տարին Մեծ ժամագիրք, Շարական (1664), Մաշտոց (1667), Տումար (1668): Ասոնցմէ զատ ետևէ կ'ըլլան նախնեաց այլ և այլ զրքերուն հրատարակութեամբ. ինչպէս Շնորհալոցն Յիսուս որդի կը տպագրուի 'ի 1660, Աստուածալունը (1666), Խորենաց Աշխարհագրուրիւնը (1668), Վարդանաց Առակաց գիրքը (1668), Առաքել պատմիչ (1669): — Իրենց այս ջանիցն և փոխոյն հետևող եղած են Ղուկաս Վանանդեցի, Թովմաս Գողթնեաց և այլք, որոնք յԱմսդերուամ յառաջ տարին և ծաղկեցուցին հայկական տպագրութիւնը:

Խսկ 'ի վենետիկ հաստատուած տըպագրատունք՝ հաւասարապէս կը ջանան ծառայել Երկու կուսակցութեամց միանգամայն: Ասանկ եկեղեցական զրքերը իրենց անխառն պարզութեամբ մէջ կը հրատարակուին. Աւետարան (1670), Ժամագիրք (1681), Սաղմոս (1682), Դպրուքեան գիրք (1684), Խորհրդաւուար, Ճաշոց (1686): Խսկ միւս կողմանէ ալ Յովհաննու Հորովի և նմանեաց Երկասիրութիւններն ու թարգմանութիւնք: Խսկ 'ի Մարտիրիա և 'ի Լիվոռնոյ հաստատուածներն, ինչպէս Ռիկանաց և իր յաջորդացը ջանիցն արդիւնք են, ասանկ ալ անոր դիտած վախճանին ծառայելու սահմանուած, ընդհանրապէս ջանացած են ազգին ուստամմական օգուտ մը ընելու հարկաւոր գրուածներ հրատարակել: Այս վախճանաւ տպագրուած են Ճարտասանուրիւն (1674), Արևետ համարդուքեան (1675), Պարզատումնար (1675), Գրքուկ կարևոր (1676), և ուրիշ քանի մը հոգեորական գրուածներ:

Յիշեցինք թէնաև յիշվով Լեհաց մասնաւոր տպարան մը բացուեցաւ 'ի 1646:

Ասոր հիմնարկողն էր Յովհաննէս Քարմատանենց. բայց միայն ապղման մը կրցաւ տպագրել, ու կ'երևնայ թէ օդնականութիւն կամ քաջալերութիւն շգմանելով՝ հարկ սեպեց ետ կենալ 'ի ձեռնարկեալ զործոյն:

Թէպէտ և տպագրութեան ելքն ան յաջող եղաւ 'ի Լէոպոլիս, սակայն այն պատուական գաղթականութիւնն 'որ Լեհաց հետ ունեցած անմիջական յարաբերութեամբն սկսեր էր Եւրոպական ուսմանց և գիտութեանց ճաշակն առնուլ, բաւական եռանդն և յառաջադիմութիւն կը ցուցընէր: Լեհացի կրկին Ստեփանոսներն, և իրենց անուամբը գտնուած երկասիրութիւնքը բաւական են մեր խօսքը հաւատարմացընելու: Որչափ ալ ջանք եղած և քաջալերութիւն ալ տրուած է՝ արևմտեան ազգեցութեան տակ եղած ուրիշ երկիրներուն մէջ արդէն մուտ գտած լեզուի նորութիւններն խօսթելու, Լէոպոլսկի ջայք յաջողեցան երկար տաեն այնպիսի ապականութենէ մը անսարատ պահել իրենց լեզուն: Այս վախճանիս համար յօրինուած է Ստեփանոսի Ռոշքեան համենիցացւոյ բազմատարֆան և հմուալից Բառագիրքը Հայ իւղուի. և թէպէտ իր անուանակից լեհացւոյն հրատարակեալ քանի մը զրուածոց մէջ լեզուի նորութեան հետքեր տեսնուին, այլ անոնք տպագրուած Ճեռքով եղած եկամուտ սրբագրութիւններ են, և զորս կը յանդիմանեն ձեռագիրք:

Ստեփանոս Լեհացի՝ իր նախնական ուսումն կատարած է յիշմիածին, որ Փիլիպպոս և Յակոբ կաթողիկոսաց օրով՝ բաւական յառաջալեմնաթիւն ցուցըցած է յուսումնականն, և ժամանակին յարմար քանի մը նշանաւոր անձինք երկացուած. և Զայնու ժամանակաւոր, առաջ կատարած կամ, և ասանկ կը վկայէ Լեհացին իր Դիօնեսիոսի Արքապատացւոյն գրոցը թարգմանութեան յիշատակարանին մէջ, և բազումք եկն երևելի վարդապետափ (յԱնդիմածին). քաջարանք, բանաստեղծք, աստուածային գրոց քաջք,

դիտունք և հմուտք » : Ասոնցմէ էր ինքն լեհացի, Առաքել վարդապետ Դավիթի ծեցի, Պական Երևանցի, Մատթէոս Ծարեցի, և այլք :

Եթնետաններորդ դարը կրնանք Երեկ գլխաւոր դպրոցի և կամ դասաւ կարդութեան վերածել.

Առաջին՝ որոնք իրենց ուսումն ՚ի բուն հայրենին կը կատարեն, և մասնաւորաբար յիշմածին՝ նոր հաստատուած և կարգադրուած կաթողիկոսական վարժարանին մէջ : Այս դասուն կը վերաբերին մեր հիմա յիշած անձինքն, և որոնք այս դարուն ընտրեալ գոյն զրիները կրնան սեպուիլ, գէթլը լըդրու նկատմամբ :

Երկրորդ՝ անոնք որ իրենց հայրենիքն դուքս, կ. Գոլայ դաշտականութեանը մէջ, պատրիարքաց անմիջական ջանքովն և հսկող ձեռնտուութեամբ կը պարապին յուսումն : Իրօնական յուզմունք արդին սկսած էին այն ատիեն տակնուվրայ ընել ազգը, և բազմապատիկ տուգանաց՝ մերժ և հալածանաց տակ ձգել հակառակ սկզբանց և վախճանի ծառայողներն : Խոճի վրայ բռնադատութեանը բանտերու մէջ խոստովանողները շատցուցին, և ինչուան նահատակներ ընծայեցին երկնից : Այս յետոց թուէն էր Երանելին կոմիտաս քահանայ Քէօմիւրճեան, որ մատենադրական ուսմանց պարապեր և գրուածներ ալ թողուցած է . թէպէտ և այս նկատմամբ իրմէ անհամեմատ վեր է իր եղացըն Երեւան Զէլէպի:

Երրորդ դաս կրնանք սեպել արևմտից մէջ, և անոր ազգեցութեանը տակ իրենց ուսումը կատարողք . որոնք ետևէ եղան նաև լեզուն անոր յարմարցնել . Այս դասուն մէջ կը սեպուին վարդան Յունանեան, Աստուածատուր Ներսեսեփի, Բարսեղ քահանայ, Յակոբ Պողոս Հովհաննէս Հողով, և այլք :

* *

Կը սկսի ուժնտամներորդ դարը : Այս դարը, — հարկ է որ խոստովանինք, — կը ջանայ կերպարանափոխ ընել աղդային ուսումնականութեան վիճակը . և այս նորոգութեան մեծապէս ձեռնտու են Սեբաստացին Միիթեար աբբայ, և իր անոնը կրող կրկին միաբանութիւնք . և մինչ ինքն արևմտից մէջ կը ջանայ և կը փնտոէ այն լցուց՝ որով կը փափաքէր վերակենցաղել զարեելս, հոն ալ ուրիշ կրկին ուխտեր՝ Լիքանանու բարձանցը խաղաղ առանձնութեանը մէջ ազգին բարւոյն և ապագայ բարւոքման կը նուիրեն իրենց կեանիքը :

Ասոնց ձեռքով ու յանքով եղած նորոգութեան առջն՝ անզդ այ և անտարբեր չի գտնուիր ազգը : Կոստանդնուպոլիս, ուր ազդն իրեն ինքնօրինութիւնն կորսնցնելէն ետքը, եկեղեցական ազդապետի մը քով կը գումարէր իր ընտրելազդոյն մասը, կը սկսի ուսումնական շարժում և կեանք մը երեցնել . և պատրիարքն Յովհաննէս կոլոտ զիսաւոր առիթ կը լայ նոյն կենդանութեան : Կոլոտ կեմանայ ու կը տեսնէ թէ ընդ ամենայն աշխարհ ցրուած, ու գրեթէ անտէր ու անիշխան ազգի մը՝ զիսաւոր նեցուկն ու պահապանն է լեզուն . և թէ հարկ է անոր յառաջադիմութեան խնամատար ըլլալ՝ ոչ միայն դպրոցներ հաստատելով, և անոնց մէջ լեզուին ուսումնաւունդեռով, այլ նաև հին նախնեաց գրերուն տպագրութեան եսեկ ըլլալով : Ուստի և պատրիարքութեանը ժամանակ՝ իրեն հովանաւորութեամբը և պաշտպանութեամբ, շատ անդամնակ ծախքով, քսանէն աւելի նախնեաց գրոց տպագրութիւններ կը հաստարակէր : Արդէն նախննթաց եօթնուտասներորդ դարուն վերջի երեք տպարան հաստատուած կը գտնենք ՚ի կ. Պողիս . Գրիգորի տպարանը՝ որի 1698 կը տպագրէ Դպրոցքեան զիրք մը, զիրք խոստովանուրեանց և Տաղա-

բան մը . յաջորդ տարին ալ ջումար մը . իսկ 'ի 1700 ուրիշ երկու նոր տպարաններ ալ երևան կ'ելլին , և են Աստուածատրոյ տպարանը , և յանուն էլմիածնի հաստատուածը : Ասդոր կետեւալ ութեասաներորդ դարուն մէջ ալ կը շարունակեն իրենց գործը , այլ և այլ երկասիրութեանց հրատարակութեամբն . բայց միայնակ չեն մնար այլ ուրիշներ ալ կը գտնուին իրենց աջակից և գործակից : Այսպէս 'ի 1700 կը տեսնենք Սարգսի տպարան մը , 'ի 1704 ուրիշ տպարան մը 'ի Փէջօղու , որ յաջորդ տարին Աստուածաշունչ գրոց տպագրութիւն մըն ալ կը հրատարակէ . 'ի 1736 ուրիշ մը յանուն Բարտարի , յաջորդ տպարին (1737) Արքանամու տը պարան մը , 'ի 1747 միւս մը յանուն Սարգսի և Միքայելի . 'ի 1750 Պետրոսան Սուելիանոսի տպարան մը , 'ի 1792 Դպրատան կոչուածը , և 'ի 1799 Մատրէսի անուամբ : Բայց ասոնց մէջ ամենէն աւելի արդիւնաւոր և յերկարատեւ եղաւ յանուն Աստուածատրոյ հաստատուած տպարանը , որ բազմաթիւ՝ և մանաւանդ նախնեաց երկասիրութիւններ տպագրութեամբ հրատարակեց : Իրեն օգնական աձեռնութու էր Պաղտասար դպիր , որ 'ի բազմաց մեծարուած իր հմտութեամբն , կարծեր էր իրաւունք ունենալ նաև սրբագրել ըստ ինքնահաճ շարադրութեանց և փոփոխութեանց նախնեաց գրքերն՝ զանոնք տպագրութեամբ չհրատարակած . և ինքն հարկաւոր կը սեպէր այն սրբագրութիւնքն , կամ լեզուի և կամ անոնց ժողովրեան բարոյականին վրայ ուներած ազգեցութեանը նրկատմամբ : Բայց ձեռագիրք , և անոնց վրայ եղած հաստարիմ և դգուշաւոր տպագրութիւնք՝ իրաւամբք կը յանդիմաննեն այդպիսի անարդարանալի ձեռներիցութիւն մը :

Ամսդերտամի տպագրութիւնք կը շարունակէին նաև այս դարուս մէջ , ազգային լուսաւորութեան սահմանուած գրուածոց տպագրութեամբ : Հուկաս վանանդեցի ոչ միայն ետքէ

կ'ըլլար տպագրութեան նիւթական մաքրութեանն հսկել , հապա նաև այն պիսի գրուածներ ալ ընծայել որոնք ստուգապէս օգտակար ըլլան ազգին , ու անոր մոտաւոր և ուսումնական գաստիարակութեանը ծառայեն : Ուստի և բաւական չի սեպեր միայն եկեղեցական գրոց հրատարակութիւնը , այլ կը ջանայ ուսումնական գրքեր ալ ընծայել , և որոց ոմանց ալ ինքն է հեղինակ կամ թարգմանիչ : Այսպէս 'ի 1702 Բնարանուրիշն մը կը տպագրէ . Սանմանաց գիրքն (1704) , Զուղացեցի Յովհաննէս վարդապետին Քերականուրիշն (1711) , Հայելի Աստուածաշունչ գրոց (1713) , Պատկերատէր եւ Պատկերատէաց (1716) : Ասիկայ կ'ըլլայ Ամսդերտամ տպուած հայերէն գրոց վերջնը : Հայկական գաղղթականութիւնք կամաց կամաց կոմիսիոն պակասիլ յարեւմուտս , կամ խառնութիլ այն ազգաց հետ՝ որոց ստորոտւթիւններն ու լեզուն կ'առնոււն , և ընտանեկան յարաբերութեամբք դիւրաւ կը կորսութ նախնական լեզուն և ազգութեան դրոշմը : Արևելից մէջ ալ քաղաքական գրից և իշխանութեանց կերպարանափոխութեամբք՝ ալ կարուութիւն չմնար նորանոր գաղղթականութեանց :

Բայց 'ի վենետիկ առաւել յերկարակեաց է այն գաղղթականութիւնն , ունենալով իր քահանայիքն , ազնուականներն ու շահավաճառը , և յետոյ նաև զմենարան և զմիաբանն , որ եկան 'ի Մուլթոնէ հոն հաստատելու համար իրենց բնակութիւնը : Ուստի և կը շարունակեն իրենց տպագրութիւններն , ու չեն գաղրիր՝ տեսնելով հանգերձ որ Միխիթար արքայն ալ իրեններովլ անոր կը զրացէր . վասն զի նա ալ անդադար կը նրախտուէր զիրենք , համոզուած ըլլալով թէ աւելի շուտով և գիւրին կ'ըլլայ ազգային յառաջադիմութեան գործը եթէ աշխատողք բազմաթիւ ըլլան : Խաշատուր վարդապետ Առաքելեան՝ որ նոյն գաղղթականութեան հոգեւոր հովիւն էր , ինքն էր միան-

դամայն որ անդադար՝ ի գրաւորական պարապմուն ետևէ կըլլար նոյն գրքուածներն հրատարակերպ օգտակար ըլլալ կարօտ ազգայնոց ։ Խոսացիք տրպագրապետ մը, Պորթովի, ինչուան ութեատաներորդ գարուն կէսը (1752) այլ և այլ հոյերէն տպագրութիւններ կ'ընծայէ, և որոնկ կը ծաւալին ազգին մէջ, թայց եղած հրատարակութիւններն աւելի ՚ի Հռովմ եղածներուն նըման են իրենց նիւթով ու լեղուով. վասն զի և նախկին գլխաւոր շարժառիթն էր ուրբանեան վարժարանի աշակերտ մը, որ ամէն բանէ աւելի կը դիտէր ազգային հոգեսոր օգուտը, իրեն կարծեացն ուրիշ հետեւոց ալ պակաս պիտի չըլլային, մանաւանդ Միաբանաւորաց գլուխութիւններն, վասն զի կը տեսնենք որ տպագրուած գրոց մէջ այնպիսիններ ալ կան որոց վախճանն է արևմտեան գրուածոց և գաղափարաց հետ ընդելացընել նաև անոնց բարեպաշտական սովորութիւններն, որք ինչուան այն ատեն գեռ անձանօթ էին ազգին։ Այսպէս ազգային աղօժամատուցից տեղ կամ հետը՝ կ'ընծայուին նաև Պարտէզ (1704), ժամագիրք Աստուշանաձնի (1706), ժամագիրք Լուսաւորչի (1706), ժամագիրք Անձեցնոց (1706), ու քանի մը տարի ետքը նաև լատինական անուամբը Պրեվիար (1715) մը։ Ասոնցմէ զատ Առաքելեան կը հրատարակէ իր թարգմանութիւններն կամ սկզբնազիր երկասիրութիւններն ։ ինչպէս Քարոզզիրը (1704), Բարյալիան աստուշանաձանուրիրն (1709), Բովանակուրիմն ամենայն ուսմանց (1711), ոսմանաւոր Աստուշանաձարանուրին մը (1729-34), բովանահակուր րին աստուշանաձանուրիրն (1736). մինչդեռ այլք եւրոպական կամ լատին լեզուէ առնուած այլ և այլ հոգեսորական գրոց թարգմանութիւններ կը ծաւալին յազգին. ինչպէս Դուռը ողորմարեան Աստուշան (1702), Լուցիիք հոգեսոր (1710), Խոկումն քրիստոնէի (1719), Աղբիրք բարի (1722), Հոգեսորական պատերազմ (1723),

Պատմապիրք հոգրոց (1724), Պաշտիկ ծաղկալի, Խոան զուման, Ներանունն առ քրիստոնէական կրուրիւն (1733) և այլն։

Լեզուի այն խառնաշփոթ վիճակին մէջ ինչ ճամբար հարկ էր որ բռնէր Միխիթար արքայի, ինք որ մանկութեան հասակէն լիուլի հմտութիւն առած էր հայ լեզուի, և իր գլխաւոր նպատակներէն մէկն ալ էր՝ նոյն լեզուն փրկել յաղաւաղութենէ, հարկ սեպեց որ ինքն ալ քիչ մը տեսն հետեւի այն աղաւաղութեան, և զրեթէ այն անիմանալի լըզուվը շարագրէ իր մէկ քանի զըրուածներն ։ Զանոնք կարգացողն ու մանկութեան և երիտասարդութեան հասակէն շարագրած երգերն իրարու հետ բաղդատողը՝ կ'իմանայ թէ որչափ դժուարին եղած պիտի ըլլայ իրեն, այն բաւական ընտիր լեզուին տեղ այսպիսի բարբառ մը գործածելլ ։ Սակայն ազգին մեծագոյն բարույն համար՝ մոտադիւր յանձն առաւ այն դժուարութիւնն ալ։

Միխիթարայ արքայի առաջին տպագրած գիրքն է Ալակերդի աստուածաբանութիւնն (1715) Պորթովիի տպարանին մէջ և անոր գրեթովը, ուր ինչպէս յիշեցինք, արդէն այլ և այլ հայերէն գրուածներ տպագրուած էին և կը տպագրուէին։ Ի 1718 ակսաւ գրեթէ ամեն տարի անընդհատ մէկ կամ երկու գիրք հրատարակել տպագրութեամբ. յորոց ոմանք իւր, և այլք ալ աշակերտացն ու բարեկամաց աշխատափրութիւնք էին, և շատերն ալ կը կարօտէին իր սրբագրութեանց։ Այսպէս և այլ տպագրութեանց հետո՝ ի 1733 տպագրեցնաև զԱստուշանաշունչ գիրս, պատկերազարդ և վայելուչ, որ նոյն ժամանակաց ընդհանուր տպագրութեանց մէջ ալ նշանաւորներէն մէկը կրնայ սեպուիլ։

Սակայն որովհետեւ իր գործածած լեզուն՝ ժամանակին հանգամանացն ու բերմանց բռնադատութիւնն էր, ՚ի հարկէ անոնց գաղբերովը՝ դիւրին և կարելի պիտի ըլլար իրեն ազգին մէջ կըկին

կենդանացընելու աշխատիլ այն նախ. կին պարզ և ընտիր հայերէն լեզուն՝ զոր արդէն կը սիրվցընէր իր աշակերտացը, և որոց եռանգը զապելու կամ չափաւորելու կ'աշխատէր : Վերջապէս եղաւ հասաւ այն սպասած ժամանակը . և ինքն Միսիթար մահուան անկողնէն կը պատուիրէր իր աշակերտաց որ ալ չափանին բուն հայկաբանութեան ուսումը կրկին կենդանացընելու աշխատիլ :

Եւ յիրաւի, իր աշակերտաներէն մէջ կը, որ ամենէն աւելի եռանգուն և սիրովն էր հայկական դպրութեանց, եւ գոկիայի Հ. Մատթէսու Վ. Գարագաշեան, իր ու հասարակաց հօրը սգալից վախճանին ուլիթերորդ. օրը կը հրաւիրէր 'ի վանս՝ Վենետիկոյ մէջ դանուած ամեն աղգայինք, եկեղեցական ու աշխարհական կարգէ, և անոնց ամենուն առջև կը լուծէր այն դժուարին լուռթիւնն որուն բունադատուած էր՝ անոր զոր կ'ողբայր, խոհեմութենէն և հրամանէն . և գեղեցիկ և ընտիր լեզուով մը՝ արձանական ճառով կը դրուատէր զինքը: Արշափ միսիթարական էր՝ գրեթէ չըս հարիւր տարիէն ետքը կրկին ըսել նախնեաց գեղեցիկ լեզուն անոր նշխարաց առջև, որուն կեանքը նուիրական վկայութիւն մը կրնար սեպուիլ հայրենեացը բարոյական ու մտաւոր բարոյն :

Նոյնպիսի ոճով և լեզուով շարագրած էր նաև սրբոյ Լուսաւորչին վարքն, զոր տպագրեց 'ի 1749: Եւ թէպէտ կը գտնուէին նաև ոմանք որ դիւրաւ չէին կրնար, կամ չէին յանձն առնուր զատուիլ այն անկերպարան ոճէն և լեզուէն որ իրենց ընդելացած էր, սակայն Եւգոկիացի վարդապետը գտաւ իրեն հետևողքն ու աշակերտաները. որոց մէջ ամենէն աւելի նշանաւոր՝ կրնանք սեպել հայկականին ուսմամբ և անխոնջ յարատեւութեամբ յուսմունա՝ Ասկէրեան Հ. Վլթանէս Վ. որ Միսիթարայ արքայի նախնական անուածութիւնը կը վերաբերի աշխարհաբար Քրիստոնէականի ու Այրինց ի թրեստ հաստատուելէն գրեթէ երեք տարի եամբ. կը սկսէին գրոց տպագրութեան ձեռք զարնել. և տպարաններնուն առաջին երախսայրիքն է Յորդորակ առ պաշտօնասիրորդիւն սրբոյ Կոռսին (1776): Ինչպէս նոյն տարուցն ալ կը վերաբերի աշխարհաբար Քրիստոնէականի ու Այրինց շկայ որ հետևեալ իննետասներորդ դարուն մէջ ունեցած պայծառութիւնը չենք կրնար փնտուել նորահաստատ ընկերութեան մը վրայ. բայց իրենց սկըզբնական վիճակին և ժամանակաց գըծուարին հանգամանաց մէջ ալ հետաքննական ու ազդին օգտակար այլ և այլ հրատարակութիւններ ըրած են. ինչպէս Թուորդք զջինաց (1783), Վիպասանեուրիւն Ամերիկոյ (1784), Պատմուրիւն Ճենկիպանի (1789), Հարերդ (1791):

թացք մը, և յետոյ ուրիշ այլ և այլ թարգմանութիւններ : Ասոնց աշակերագ և դասակիցք են մինչև ցվախճան դարուս Ագոնց Ստեփանոս արքեպիսկոպոս, Անանեան Հ. Մկրտիչ, Ալեքսանեան Հ. Զաքարիա և Զամշեան Հ. Միքայէլ վարդապետներն : Այս վերջինս 'ի 1779 կը հրատարակէր իր ընդարձակ Քերականութիւնը, որ ազգին մէջ գտած արժանաւոր ընդունելութեամբն նախնեաց լեզուն վերակենցաղիլու ծառայութեանը սահմանուած էր: Քանի մը տարիէն ետքն ալ կը տպագրէր իր Հայոց պատմուրիւնն (1784-86): ի 1789 արքունական հրամանաւ մասնաւոր հայկական տպարան մըն ալ կը հաստատուի յանուն վանաց, նոյն իսկ սրբոյն Ղազարու մենարանին մէջ:

Ութեատաններորդ դարուս վերջին քառորդին կը ծաղկի 'ի թրեստ համանունութեան մըն ալ, Միսիթարայ արքայի կանոններն ու նպատակն ունենալով: Այս կոչման հետևանկին էր նաև աղջային կրթութեան համար աշխատիլը, և կարևոր գրոց յօրինման և հրատարակութեան զբաղիլը. ուստի և իրենց 'ի թրեստ հաստատուելէն գրեթէ երեք տարի եամբ. կը սկսէին գրոց տպագրութեան ձեռք զարնել. և տպարաններնուն առաջին երախսայրիքն է Յորդորակ առ պաշտօնասիրորդիւն սրբոյ Կոռսին (1776): Ինչպէս նոյն տարուցն ալ կը վերաբերի աշխարհաբար Քրիստոնէականի ու Այրինց շկայ որ հետևեալ իննետասներորդ դարուն մէջ ունեցած պայծառութիւնը չենք կրնար փնտուել նորահաստատ ընկերութեան մը վրայ. բայց իրենց սկըզբնական վիճակին և ժամանակաց գըծուարին հանգամանաց մէջ ալ հետաքննական ու ազդին օգտակար այլ և այլ հրատարակութիւններ ըրած են. ինչպէս Թուորդք զջինաց (1783), Վիպասանեուրիւն Ճենկիպանի (1789), Պատմուրիւն Հարերդ (1791):

Հոգմանյաց Ռւրբանեան տպարանն դեռ սայս ուժեւտասներորդ դարուն մէջ ալ քանի մը հայկական տպագրութիւններ կ'ընծայէ, և 'ի մէջ այլոց նաև լատին-հայ բառդիրք մը (1714), Մեկնիչ սրբոյ աշետարանին (1714), Միւսալ Զահկաց համար (1828): Անկէ ետքը, զբքիթէ քսանուհինդ տարուան միջոց, հայկական տպագրութիւնն մը չենք գտներ հօն, բաց 'ի Բենեդիկտոս ԺԴ Քահանայապետի շրջաբերականին հայերէն թարգմանութենէն (1755), և յաջորդ տարին սրբոյն Յակովբայ Մըծքնացոյ ճառերն հայ և լատին թարգմանութեամբ: Ապա 'ի 1775 Հանգամանք որ իշխանելոյ զլորս եկեղեցին Հռովմայ, ու 'ի 1784 Այրքենարանն մը, որ ուժեւտասներորդ դարուն վերջն տպագրութիւնն է 'ի Հռովմ:

Այսոնցմէ զատ այլ և այլ տպարաններ հաստատուելով նաև 'ի բուն Հայատան, յիշմիածին, 'ի Նախիթեւան, 'ի Մադրաս Հնդկաց, 'ի Զմիւռնիա և մինչև 'ի Լոնտրա, այլ և այլ տպագրութիւնք կ'ընծայուին:

* *

Կը մոնենք իննեւտասներորդ դարը, յորում կ'ապրիլի: — Իժուարին է ժամանակակից ուսումնականութեան վրայ խօսիլ, ուստի և մեր տեսութիւններն՝ համառուս պիտի ջանան ըլլալ:

Իննեւտասներորդ դարը՝ պատերազմաց և արինչեղութեանց տիսուր և աւերիչ արհաւրօք կը ներկայանայ մեզի, բոլոր Եւրոպա ընդարձակ արեան գետի մը կերպարանք առնելէն ետքը, կրկին յերկարատու խաղաղութիւնն մը կը ստանայ, ուսմանց և գիտութեանց բարգաւաճանքն առթող: Այդ խաղաղ անդորրութիւնն պէտք էր որ ունենար իր փրկարար աղքեցութիւնն նաև հեռաւոր արմելից վիայ, որ ալ աւելի կը սկսէր մօտենալ Եւրոպայի իրեն հազորդակցութեանց դիւրութիւններովն, և անոր քաղաքակրթական սկզբանցը և ուսմանց նախանձախնդիր ըլլալովը:

Օսմանեան պետութիւնն՝ որ սուրբ մէկ դի ձգելով, հպատակացը սրտին վրայ թագաւորելու ապահով իշխանութեան ետքէ կ'ըլլար, ոչ միայն իր կին օրինաց խստութիւնն կը մոռնար, այլ նաև արեմուեան քաղաքակրթութեան արևելց մէջ տարածուելուն ջանագիր: Հարկ չէ ըսել թէ որաշափ և որամիսի փութով այս բանիս ետք եղան վերջին վեհապետք:

Համաձաւալ կրթութեան օգուտոներէն զինաւոր օժանդակուողներէն մէկն ալ հարկ էր որ մեր ազգն ըլլար: Արեւելեան ազգաց մէջ յոյնէն ետքը ամենէն սրամիսն և յաջողակ, արժան էր որ ընդհանուր լուսաւորութեան առջև անտարբեր չմնալով, իր նիւթական և բարցական վիճակն բարւորելու ետքէ ըլլար: Իր ջանքն ալ ապարդիւն չմնացն իրեն մեծապէս օժանդակ եղած ե: այլ և այլկրօնական և ուսումնական ընկերութիւններ, որ օր ըստ օրէ կ'աճին կամ կը զօրանան. նախակրթական, երկրորդական ու բարձրագոյն դպրոցներ, յորոց ոմանք Եւրոպիոյ մէջ ալ հաստատուած են. տպարանները, օրագիրը և օգտակար դրոց տպագրութիւններ կը գիւրացընեն իրեն այն ճանապարհը՝ որ միակ կարևորն է, ուրիշ ծաղկեալ ազգաց օրինակին հետեւլու համար:

Բայց ի՞նչ վիճակի մէջ կը ձգենք լեզուն և մեր մատենագրութիւնը: — Համառուս քննութեան մը արժանաւոր է այս կարևոր ինդիկին:

Իննեւտասներորդ դարուս սկիզբը ընտիր ու ծաղկեալ վիճակի մը մէջ կը ներկայանայ մեզ հայերէն դրաբառ լեզուն. եկամուտ նորութիւններէն մաքրուած ու զտուած, հին լեզուի մը ազնուականութեան գրոշմը կը սկսի կրել. հմուտ ու կարգարան քերականութիւններ կ'ապահովցընեն անոր պագայն:

Խսկ անկէ Ետքը:

Մէկդի առնլով այն քանի մը անձինքը՝ որ աւելի դարուս առաջին կիսուն կը վերաբերին, ու քանի մը պատաւա-

ւոր բացառութիւնք, կը տեսնենք դրա-
բառի ուսումը տփարացած, և անոր
տեղ աշխարհիկ բարբառը տիրացած:
Գիտութիւնքն և ուսմունք ժողովրդե-
կան ընելու համար՝ հարկ կ'ըլլայ ժո-
ղովրդեան լեզուովը խօսիլ, և աշխար-
հիկ լեզուին մաքրութեամբը թէ աւելի
դիրամատոյց և թէ աւելի ցանկայի ը-
նել գրոց լեզուին ուսումը: Ժամանակը
պիտի ստուգէ այս փափաքը, կամ ա-
նոնց իրաւացի կարծուած երկիրը՝ թէ
ասանկ բոլորովին օտարացընելով գրա-
բառի ուսումն, կամ մանկութեան քա-

նի մը տարիներուն յանձնելով, պիտի
կարենանիք. ունենալ լաւագոյն եկը մը՝
քան զոր ունեցան մեզմէ շատ աւելի,
յառաջադէմ ազնիք եւրոպիոյ լատին
լեզուին ուսմունք նկատմամբ: Բայց ե-
թէ լատինը՝ իրենց մշջ ուսումնականաց
լեզու է, գրաբառը՝ մեր հին հարցը,
մեր նախնեաց ու թագաւորաց լեզուն
է: Գէֆթ այս մոտածութիւնը՝ պէտք է
զմեզ խրախուսէ՝ այդպիսի գեղեցիկ յի-
շատակ մը իր մէջն ամփոփող լեզուին
յառաջադիմութեանն աշխատելու:

ԽՕՍՔ ԱՐԲՈՅՆ ԱԲԻՍԱԴԻԵԱՑ ԻՄԱՍՏԱՍԻՒԻ ԱԹԵՆԱՑԻՈՑ

(ՆՈՐԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ)

Ի շարակարգ աստուածաշնորհ եկե-
ղեցական դպրութեան, յետնորոց կտա-
կարանաց և գրուածոց առաքելաշաւիդ
Աշակերտացն, և յառաջ քան զմատե-
նագրութիւնս սեռաբար անուանեալ
Հարցն եկեղեցւոյ, որք յերրորդումն
ծագեալ դարու ՚ի Չորրորդումն յաւէտ
պայծառացան, չողին Քրիստոսի եյեռ
յերկրորդումն դարու զարտացովն ա-
նուանեալս (Apologistes) կրօնից իւ-
րոց. արք՝ որք ընդ հեղակամբոյր վար-
դապետութեան աւետարանին՝ զելլե-
նական փիլիսոփայիցն լժակցեցն ա-
րուեստաբանութիւն, զարմանալինզու-
գութեամբ երկուց աննմանեացն՝ ըզ-
րունն զմիակն բացափայլել ճշմարտու-
թիւն. և զի ընդ հաւատոցն զնդու-
թեան ունեին և զհեթանոսական հըմ-
տութիւնն՝ առ ՚ի զհեթանոսան պա-
պանձեցուցանել՝ նոցին կուռ և կիրթ
լեզուաւ, բանք նոցին ոչ միայն առ այն
ժամու լողան, այլ և ՚ի զինի եկելոց
Հարց Արբոց յոյժ մեծաբրեցան, և յա-
ճախ ՚ի վկայութիւն ածան ՚ի ճառս
իւրեանց: Այլ ՚ի դադարել հեթանո-
սութեան ՚ի ՚ի դարու, կամ իրու ոչ

ևս կարեւորք ընդգէմ նմին Զատագո-
վութեանցս, կամ վասն դժուարիմաց
բանից սոցին, ևս և առ հնութեանն,
նուազեցին օրինակը գրուածոցս, և
տակաւ խափանեցան, մինչև գրեաթէ
և ոչ մի ՚ի բանից քրիստոնեայ իմաս-
տասիրացն այնոցիկ, որպիսիք ումանք
էին կուատրագոս, Արիստիգէս, Մելի-
տոն, Միլտիադէս, Աթենագոր, Յուս-
տինոս, և այլն, անթերի եհաս առ մեզ,
բաց յերկրոցուն յետնոցդ. այլ պատա-
ռիկը ինչ համառօտք՝ առ իւսերեայ
կամ ՚ի ճառս Հարց, բաւականք՝ ոչ ՚ի
յագուրդ, այլ ՚ի սրել և ՚ի տանջել
զբաղց մոտաց եկեղեցասէր բանասիրաց
ամենայն գարուց:

Առաջին ՚ի Զատագովս կամ զոյդ և
ուսումնակից առաջնոյն (կուատրագո-
սի) Արիստիգէս իմաստասէր և ճար-
տասան աթենացի, ՚ի սկիզբն Բ. դարու՝
ծանեաւ, ընկալաւ և պաշտպանեաց
զբրիստոնէութիւն, և սրբութեան ա-
նուամբ կնքեցաւ. ՚ի գրգռել թշնա-
մեաց խային զիդրիանսու կայսր, մինչ
չլլթէնսն էր, ՚ի հալածելն որպէս նա-
խորդ իւր Տրայիանոս՝ զբրիստոնեայս,